



Մունիցիպալ առաջնորդների 2018 թվականի աշնանային դպրոց

«Հայաստանի համայնքների միությունը» հայտարարում է Մունիցիպալ առաջնորդների 2018 թվականի աշնանային դպրոցի ընդունելություն:

Դասընթացները նախատեսված են 18-28 (ներառյալ) տարեկան բոլոր ցանկացողների համար, ովքեր ունեն բարձրագույն կրթություն կամ ուսանում են ԲՈՒՀ-ում և հետաքրքրված են համայնքային կառավարման ոլորտով: Դասընթացներին հասկապես խրախուսում ենք մասնակցել կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների ակտիվ երիտասարդ անդամների:

Ուսուցումն անվճար է: Հասարակական, կուսակցական գործունեությունը, ինչպես նաև օտար լեզուների իմացությունն ընդունելության ժամանակ առավելություն կդիտարկվեն:

Մունիցիպալ առաջնորդների դպրոցի դասընթացները տեղի են ունենալու դասախոսությունների, սեմինարների, պրակտիկ ու ճանաչողական այցերի, տեղական ու միջազգային փորձագետների, հանրային ու պետական գործիչների հետ հանդիպումների, կլոր սեղանների ձևով, շաբաթական երկու օր՝ ժամը 18:30-ից 21:00-ը: Աշնանային դպրոցի ընդհանուր տևողությունը 4 ամիս է՝ նոյեմբերից սկսած: Դասընթացների շրջանակներում ունկնդիրներն պատրաստելու են անհատական աշխատանքները սահմանված թեմաներով: Դասընթացների օրերին մասնակիցների հասանելիությունը պարտադիր է: Կկազմակերպվեն նաև արտագնա հանդիպումներ:

Դիմումներն ընդունվում են մինչև ս/թ հոկտեմբեր 01-ը: Ընտրության առաջին փուլը հաղթահարած թեկնածուների հետ կանցկացվեն անհատական հարցազրույցներ:

Ընդունելության համար անհրաժեշտ է լրացնել ստորև նշված հղումով էլեկտրոնային հայտադիմումը, ինչպես նաև mls@caa.am էլ-փոստի հասցեին ուղարկել ինքնակենսագրություն (CV) և կրթությունը հավաստող փաստաթղթի (դիպլոմի կամ բուհից տեղեկանքի) էլեկտրոնային պատճենը, իսկ էլեկտրոնային նամակի վերնագրի տողում նշել «Մունիցիպալ առաջնորդների դպրոց»:

Էլեկտրոնային դիմումի հղում՝

<https://goo.gl/forms/8gLtzRNuLZ3j7cyy2>

Հեռախոս՝ 010574501

Հայաստանի համայնքների միություն

www.caa.am